ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 18-Լ հրամանի 2-րդ

կետում «2-15 ենթակետերը ուժի մեջ են մտնում նոյեմբերի 1-ին» բառերը փոխարինել «3-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում նոյեմբերի 1-ին, 13-րդ ենթակետը՝ նոյեմբերի 15-ին, 2-րդ, 4-12-րդ, 14-րդ և 15-րդ ենթակետերն ուժի մեջ են մտնում դեկտեմբերի 1-ին» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«31» 10. 2023թ.

ք. Երևան